ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/18, 27.01.2022թ.

Շտկման ամսաթիվը՝ 02.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Արիդես Պռո» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ ոստիկանություն

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ԽՄԱԾՈՒԹՅՈՒՆ/2022/Հ-14

Գնման առարկան՝ խմածությունը չափող սարքի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել «ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ԽՄԱԾՈՒԹՅՈՒՆ/2022/Հ-14» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել «ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ԽՄԱԾՈՒԹՅՈՒՆ/2022/Հ-14» ծածկագրով գնման ընթացակարգը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

111 Raffi Str., Yerevan City, Armenia, 0064
0064, ՀՀ ք. Երևան, Ռաֆֆու փող. 111
E-mail: info@arides.am Tel: +37460 529950

ԱՊԳ-01/0102222

Ք. Երևան, 02.02.2022թ.

ՀՀ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

(հասցե ք. Երևան, Մելիք Ադամյան 1)

Արիդես Պոո ՍՊԸ տնօրեն Ա. Սահակյանից

(հասցե ք. Երևան, Ռաֆֆու 111)

Սույն բողոքը վերաբերվում ՀՀ ոստիկանության գնումների բաժնի կողմից հայտարարված մրցույթին՝ № ՀՀ Ո ԲՄԱՊՁԲ-ԽՄԱԾՈՒԹՅՈՒՆ/2022/ Հ-14 հրապարակված 2021-12-17 16:53:00: Մրցույթը վերաբերվում է ալկոհոլի չափաբժինը արտաշնչած օդում ստուգող սարքերին՝ ալկոթեստերներին՝ նախնական թվով 150 հատ:

Արիդես Պոո ՍՊԸ (ՀՎՀՀ 01282081, գրանցման հասցե՝ Մալաթիա-Սեբաստիա փ. Ռաֆֆու 111) (այսուհետ՝ Կազմակերպություն) ի դեմս տնօրեն՝ Ալինա Սահակյանի, ցանկանում է բողոքարկել մրցույթի տեխնիկական բնութագրերը և կից կառուցվածքային պահանջները:

Լինելով ալկոթեստերների տեղական արտադրող՝ Կազմակերպության համար խիստ կարևոր է լինել իր երկրի ներսում բոլոր կարիքներն բավարարող կազմակերպություն, ուստի և ճՈ սարքերի հնարավոր մատակարարումը սեփական երկրի ներսում միշտ եղել է բարձր կարևորություն ունեցող հարց: Արիդես ընկերությունը, որի ներկայացուցիչը ՀՀ տարածքում հանդիսանում է Արիդես Պոո ընկերությունը, տեղում իրականացնում է ալկոթեստերների արտադրություն և ընթացիկ սպասարկում, իրականացնում է նաև սարքերի ստուգաչափումը: Արիդես ՍՊԸ արտադրանքը համապատասխանում է ISO 9001 որակի կառավարման միջազգային ստանդարտներին: Կազմակերպության կողմից արտադրված ալկոթեստերները իրենց ուրույն դիրքն են զբաղեցնում թե հայկական շուկայում՝ գրանցված լինելով որպես չափիչ սարքեր և իրենց տեղն գտնելով արդյունաբերաարտադրական տարբեր կազմակերպություններում, այդ թվում՝ բժշկական հաստատություններ, հանքարդյունաբերության ոլորտ և այլ արտադրական կազմակերպություններ, թե ՀՀ-ից դուրս: Կարևոր է նշել, որ հայկական արտադրության սարքերը արդեն իսկ գրանցված են ՌԴ-ում որպես բժշկական պարագաներ, և չափիչ սարքեր և իրենց կայուն դիրքն են զբաղեցնում

111 Raffi Str., Yerevan City, Armenia, 0064
0064, ՀՀ ք. Երևան, Ռաֆֆու փող. 111
E-mail: info@arides.am Tel: +37460 529950

ռուսական շուկայում ապահովելով տարեկան առավել քան 20,000 միավոր սարքի սպառում: Կազմակերպության արտադրության ալկոթեստերները ստացել են նաև չափիչ սարքերի կարգավիճակ Ղազախստանի Հանրապետությունում և Բելառուսում, իսկ եվրոպական շուկայում մեր ներկայությունն ապահովում ենք ունենալով CE սերտիֆիկատ, համաձայն որի սարքերը համապատասխանում են Եվրոպական Միության ներկայացրած պահանջներին և ստանդարտներին: Կարևոր է նշել նաև, որ տեղում արտադրվում են նաև սարքերի միջոցով ստուգման նպատակով անհրաժեշտ մեկանգամյա օգտագործման մուշտուկներ: Վերջիններիս մատչելի և հասանելի լինելը խիստ անհրաժեշտ պայման է սարքերը սպառողների համար՝ դրանց գնումների կազմակերպման և ֆինանսների կառավարման գործընթացում:

Մրցույթի մասին Կազմակերպությունը տեղեկացել է ՀՀ Ֆինանսների Նախարարության www.armeps.am կայքից: Բաց մրցույթում պահանջված գնման առարկային ներկայացվող պահանջներն ուսումնասիրել ենք համաձայն կառավարության 19 մարտի 2009 թվականի № 277-Ն որոշման: Սույն որոշմամբ հստակ ներկայացված են տեխնիկական բնութագրերը, որոնց պետք է համապատասխանի արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով ոստիկանության ծառայողի կողմից վարորդի սթափության վիճակի գնություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու համար նախատեսված տեխնիկական միջոցը: Վերոնշյալ մրցույթի բացման պահից սակայն անակնկալ կերպով բացահայտեցինք, որ սարքին ներկայացվող տեխնիկական բնութագիրը ոչ այլ ինչ է, քան որոշակի սարքի մանրամասն նկարագրություն բոլոր տեխնիկական խիստ մանրակրկիտ բնութագրերով, որ, ի դեպ, այժմ օգտագործվում է ՀՀ ճՈ տեսուչների կողմից:

Բաց մրցույթի խիստ մանրամասն տեխնիկական նկարագրության մեջ բացահայտելով որոշակի անհամապատասխանություններ մեր կողմից առաջարկվող սարքի և տեխնիկական պահանջների միջև՝ փորձեցինք դիմել համաձայն ընթացակարգի ՀՀ ոստիկանության գնումների բաժին՝ խնդրանքով փոփոխել տեխ. բնութագրերը կամ հաստատել մեր սարքի անհապատասխանությունների ընդունելիությունը: Ի պատասխան նամակին, սակայն, ստացվեց պատասխան «Խնդրում եմ հետևեք մեր կողմից տրված տեխնիկական բնութագրի պայմաններին:»:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի Հոդված 14-ի՝ գնման առարկայի տեխնիկական պայմանները պետք է ներառեն ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակի, ստանդարտների, աշխատանքի արդյունքների, թեսթավորման, անվտանգության, չափերի, պայմանական նշանների,

111 Raffi Str., Yerevan City, Armenia, 0064
0064, ՀՀ ք. Երևան, Ռաֆֆու փող. 111
E-mail: info@arides.am Tel: +37460 529950

տերմինաբանության, փաթեթավորման, բեռնաթափման, նշանադրման, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը: Տեխնիկական բնութագրերը, պլանները, գծագրերը, էսքիզները կամ նկարագրերը (եթե այդպիսիք պահանջվում են) պետք է նաև պարունակեն գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների անմիջական նկարագրությունը՝ հիմնված Հայաստանի Հանրապետության կողմից սահմանված տեխնիկական և որակական բնութագրերի (ստանդարտների) վրա, ինչպես նաև ստանդարտները, ցուցանիշները, պահանջները, պայմանական նշանները և տերմինները, գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների տեխնիկական և որակական բնութագրին վերաբերող գործարքների պայմանների ստանդարտները:

Ինչպես արդեն նշել ենք, բողոքի առարկա հանդիսացող բաց մրցույթի գնման առարկան ներառում է ալկոհոլի չափաբժինը արտաշնչած օդում ստուգող սարքերի՝ ալկոթեստերների ձեռքբերումը: Նշված սարքերի նկատմամբ կան սահմանված տեխնիկական պայմաններ, ինչպես նշել ենք, համաձայն կառավարության 19 մարտի 2009 թվականի № 277-Ն որոշման: Դրանք են՝

1) չափման արդյունքների և մուտքագրված տվյալների արտաբերում սահմանված տեսքի ելքային փաստաթղթի (արձանագրության) տեսքով՝ ինչպես չափումից անմիջապես հետո, այնպես էլ հետագայում՝ տեխնիկական միջոցի հիշողությունից.

2) առանց հոսանքի արտաքին աղբյուրների միացման իրականացվող չափումների քանակը՝

ա. առանց արձանագրություն տպագրելու՝ 500-ից ոչ պակաս,

բ. արձանագրություն տպագրելով՝ 100-ից ոչ պակաս.

3) թույլատրելի սխալանքի սահմանները՝

ա. 0-0,2 մգ/լ միջակայքի համար՝ +-0,02 մգ/լ-ից ոչ ավելի,

բ. 0,2 մգ/լ-ից բարձր միջակայքի համար՝ +-10%-ից ոչ ավելի.

4) նմուշը վերցնելուց հետո չափման ժամանակը՝ 10 վրկ-ից ոչ ավելի.

5) չափումների արդյունքների հիշողություն՝ վերջին 20000 չափումներից ոչ պակաս.

6) սնուցումն ավտոնոմ AAA տիպի մարտկոցներով՝ փոփոխական և հաստատուն հոսանքի արտաքին աղբյուրներից սնուցման (լիցքավորման) հնարավորությամբ.

111 Raffi Str., Yerevan City, Armenia, 0064
0064, ՀՀ ք. Երևան, Ռաֆֆու փող. 111
E-mail: info@arides.am Tel: +37460 529950

7) տվիչի շահագործման ժամկետ՝ 2 տարվանից ոչ պակաս.

8) տեխնիկական միջոցի և համակարգչի միջև կապի ապահովում ստանդարտացված միացումներով (USB կամ miniUSB).

9) աշխատանքային և պահպանման ռեժիմներում ջերմաստիճանների նվազագույն և առավելագույն թույլատրելի սահմանները՝ -10° C-ից մինչև 50° C:

Բաց մրցույթի առարկայի տեխնիկական բնութագիրը սակայն պարունակում է էլ ավելի մանրամասն տեղեկատվություն, որ, ճիշտ է, չի հակասում վերոհիշյալ որոշման պահանջներին, սակայն սարքին ներկայացնում է ոչ էական պահանջներ՝ չվերաբերող տեխնիկական և որակական բնութագրերին: Ցանկանում եմ Ձեր ուշադրությունն հրավիրել այդ կետերից որոշներին, որ առհասարակ սարքի ֆունկցիոնալ հնարավորությունների վրա չեն ազդում: Այդպիսիք են օրինակ՝ էկրանի չափսի խիստ սահմանափակում, սարքի կողմից օգտագործվող անհատական հիգիենիկ փչիկների՝ մուշտուկների չափսերի խիստ սահմանափակում (վերջինս սարքի ֆունկցիոնալի հետ կապ չունեցող աքսեսուար է) և ավելին, ունենք պահանջ վերոհիշյալ փչիկը սարքի վրայից հեռացնելու նպատակով սեղմակի դիրքի նկատմամբ, այն է՝ սարքի իրանի վրա՝ կողային հատվածում նախատեսված լինի հատուկ այդ նպատակով սեղմակ, մարտկոցի կափարիչի ձեռքով բացվելու հնարավորությունը՝ առանց որևիցե գործիքի կիրառման, սարքի ձայնի կարգավորման սեղմակի դիրքի նկարագրություն: Այս բոլոր կետերը ուղակի մանրամասն նկարագիր են որոշակի սարքի, և խոչընդոտում են այլ սարքերի մասնակցությանը մրցույթին, որոնք սակայն կարող են ֆունկցիոնալ տեսանկյունից լինել ավելի բարձր և որակյալ:

Ցանկանում եմ շեշտել, որ վերոհիշյալ խիստ մանրամասն նկարագրության կետերը ավելացել են հենց 2021թ. հայտարարված բաց մրցույթում, երբ արդեն ակնհայտ էր այլ մասնակցի մասնակցությունը բաց մրցույթին այլ սարքով և ինչ-ինչ պայմաններում հնարավոր շահագրգիռ կողմին հայտնի էր դարձել մեր արտադրության սարքի պարամետրերը, որով ցանկանում ենք մասնակցել մրցույթին: Համեմատելու դեպքում նախորդ տարիներին անցկացված մրցույթների նկարագրությունները և այս տարում ներկայացված խիստ մանրամասն նկարագիրը (ՀՀ Ո ԳՀԱՊՁԲ-2021-ՃՈ-ԱԼԿՈ և ՀՀ Ո ԳՀԾՁԲ-ՃՈ/ԽՄԱԾՈՒԹՅՈՒՆ/2021/Հ-3) ակնհայտ դրսևորվում է միտում նկարագրել և ձեռք բերել որոշակի սարք որոշակի մատակարարից:

Իսկ մեր հարցմանը ՀՀ Ոստիկանությանը խնդրանքով փոփոխել տեխ. բնութագրերը կամ հաստատել մեր սարքի անհապատասխանությունների

111 Raffi Str., Yerevan City, Armenia, 0064
0064, ՀՀ ք. Երևան, Ռաֆֆու փող. 111
E-mail: info@arides.am Tel: +37460 529950

ընդունելիությունը ի պատասխան չստացանք որևէ բացատրություն կամ մեկնաբանություն:

Նշված պայմաններում անհրաժեշտ ենք համարում նշել նաև, որ սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ սահմանված ազատ տնտեսական մրցակցության կարգը:

Համաձայն Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի՝ նախատեսվում է սահմանել տեխնիկական բնութագրերը կատարողականի և գործառնական պահանջների առումով և ոչ թե ինժեներական կամ նկարագրական հատկանիշների առումով: Եթե տեխնիկական բնութագրերում օգտագործվում են ինժեներական կամ նկարագրական հատկանիշներ, պատվիրատուն, անհրաժեշտության դեպքում, պետք է նշի, որ նա կդիտարկի համարժեք ապրանքների կամ ծառայությունների մրցութային առաջարկները, որոնք ակնհայտորեն բավարարում են գնման պահանջներին՝ ներառելով մրցառքի փաստաթղթերում այնպիսի բառեր, ինչպես՝ «կամ համարժեք» բառերը

Հաշվի առնելով վերոգրյալը՝ խնդրում ենք Ձեր միջնորդությունը ուսումնասիրելու նշված բաց մրցույթը և չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը (հայտարարված տեխնիկական բնութագրերի համաձայն բաց մրցույթի բացումը)՝ հաշվի առնելով դրանց կազմման ընթացքում թույլ տրված խախտումները, մրցակցային հարաբերությունների սահմանափակումը, ակնհայտ կողմնակալությունը որոշակի սարքի ձեռքբերման որոշակի մատակարարից:

Արիդես Պրո ՍՊԸ հաշվեհամարն է՝ 1570031659310100:

Արիդես Պրո ՍՊԸ տնօրեն Ալինա Սահակյան